

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԵՐԿՐԻ ԱՊԱԳԱՅԻ ՎՐԱ.

## ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989\_2024.3-43

Կրթությունն ամենահզոր զենքն է, որը կարող է  
օգտագործվել աշխարհը փոխելու համար:

Նելսոն Մանդելա

**Հիմնաբառեր.** հետբուհական կրթություն,  
գիտություն, ասպիրանտուրա,  
դոկտորանտուրա

Գիտության ոլորտն արդեն տարիներ շարունակ  
Հայաստանի աքիլեյան գարշապարն է: Բայց չէ՞ որ  
գիտությունն է տնտեսության և հասարակության  
զարգացման շարժիչ ուժը, որին ուղղված ջանքերը  
միշտ էլ անհրաժեշտ ու օրակարգային են...

Հայաստանի հետբուհական կրթության ընթա-  
ցիկ իրավիճակի վերլուծությունն առանցքային նշա-  
նակություն ունի՝ հնարավորություն տալով բացա-  
հայտելու սոցիալ-տնտեսական կայուն զարգացմա-  
նը խոչընդոտող հիմնական մարտահրավերներն ու  
սպառնալիքները և կանխորոշելու, թե ինչ «որակի»  
հասարակություն ու երկիր ենք ունենալու ապա-  
գայում:

Հետբուհական կրթության դերն ու նշանա-  
կությունը երկրի կայուն և երկարաժամկետ  
զարգացման ապահովման գործում թերազնահատել չի  
կարելի: Որակյալ հետբուհական կրթությունը հնարավո-  
րություն է տալիս ստեղծելու հասարակական արժեքներ  
և ձևավորելու ընտրանի (էլիտա), որը նորագույն գիտելի-  
քի, նորարարության ու առաջընթացի առաջամարտիկը  
պետք է լինի:

Գիտելիքահենք տնտեսության հայեցակարգի հիմ-  
քում հենց հետբուհական կրթությունն է, քանի որ դա ուղ-  
ղակիորեն առնչվում է վերջինիս առանցքային բաղադրիչ-  
ներից մեկին՝ մարդկային կապիտալի զարգացմանը:

Անհաշվելի են մասնագիտական շրջանակների կող-  
մից կատարված՝ երկրի տնտեսական զարգացման և  
մարդկային կապիտալի միջև առկա ուղղակի կապը բա-  
ցահայտող հետազոտություններն ու վերլուծությունները:



### Տաթևիկ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀՊՏՀ դասախոս

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը և մա-  
գիստրատուրան՝ «Միջազգային  
տնտեսական հարաբերություն-  
ներ» մասնագիտությամբ: Այնու-  
հետև կրթությունը շարունակել է  
ՀՊՏՀ «Միջազգային տնտեսա-  
կան հարաբերություններ» ամ-  
բիոնի ասպիրանտուրայում: Եր-  
կու տարի աշխատել է Պեկինի  
բիզնեսի և տեխնոլոգիայի հա-  
մալսարանում՝ որպես այցելու  
գիտնական: Որպես փորձագետ  
և հեղազոտող՝ աշխատել է մի  
շարք միջազգային կազմակեր-  
պություններում (EU4Culture,  
USAID, UNICEF, ILO, IMO և այլն):  
Այժմ աշխատում է նաև ՀՊՏՀ  
կարիերայի կենտրոնում: Հեղի-  
նակ և համահեղինակ է մի շարք  
գիտական հոդվածների:

<https://orcid.org/0000-0001-6488-2717>

Դրանցից պարզվում է, որ հետքուհական կրթության՝ որպես կրթական շղթայի վերջնարդյունքը որակյալ մարդկային կապիտալն է, որն ունակ է իր «ուսերին» տանելու գիտելիքահենք տնտեսության ստեղծման բարդ, բայց անհրաժեշտ «ճանրությունը»:


Հայաստանում հետքուհական կրթության ընթացիկ իրավիճակի վերլուծությունը չափազանց արդիական է: Ընթացիկ միտումների ուսումնասիրությամբ հնարավոր է կատարել երկրի ապագայի հետ կապված որոշակի մտահանգումներ՝ գնահատելով որոշակի ոլորտների և ուղղությունների զարգացման հնարավորությունները որակյալ մարդկային կապիտալի առկայության պարագայում:

Հետքուհական կրթության ներկան ու ապագան գնահատելուց առաջ հարկ է արձանագրել, որ Հայաստանը դեռևս խորհրդային տարիներից բավական լուրջ գիտական ժառանգություն ունի: Մասնավորապես՝ 1943 թվականին Խորհրդային Հայաստանում հիմնադրվել է Գիտությունների ակադեմիան<sup>1</sup>, որը, գիտության զարգացման տեսանկյունից, որակապես նոր փուլի սկիզբ է դարձել: Խորհրդային Հայաստանում զուգահեռաբար զարգացել են գիտական հետազոտությունների մի շարք ուղղություններ, որոնք համատեղում էին ինչպես ավանդական ոլորտները, այնպես էլ բուռն առաջընթաց ապահովում աստղագիտության, ֆիզիկայի, մաթեմատիկա-

յի, մեխանիկայի, ֆիզիոլոգիայի, կենսաքիմիայի, էլեկտրատեխնիկայի և այլ գիտությունների համար: Վիկտոր Համբարձումյանը (աստղաֆիզիկոս), Միխայիլ Չայլախյանը (ֆիտոֆիզիոլոգ), Խաչատուր Կոչտոյանցը (ֆիզիկոս), Հրաչյա Բունիաթյանը (կենսաքիմիկոս), Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրները (միջուկային ֆիզիկոսներ) և բազմաթիվ այլ՝ գիտական շրջանակներում հանրահռչակ մարդիկ հենց խորհրդային ժամանակաշրջանում հայկական գիտության համայնապատկերը «կերպարանափոխած» նվիրյալներ են, որոնց կյանքն ու գործունեությունը ծառայել են իրենց ոլորտներում գիտական նվաճումների ապահովմանն ու մեր երկրում գիտության զարգացմանը:

Հայաստանի անկախությանը հաջորդող տարիներին գիտությունն ու հատկապես դրա ապագան ոչ միայն լավատեսության տեղիք չեն տալիս, հույս չեն ներշնչում, այլև շատ դեպքերում անգամ մտահոգիչ են: Հատկանշական է, որ գիտության ապագայի նկատմամբ անհանգստությունը ներկայում հիմնավորվում է մի շարք պատճառներով՝ գիտության մեջ ներգրավվածների ցածր տեսակարար կշիռ, սեռային և մարզային չափազանց անհամաչափ բաշխվածություն, ըստ որոշ մասնագիտությունների՝ գիտության մեջ մասնակցայնության ցածր աստիճան:

Գծապատկեր 1-ի տվյալների վերլուծու-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

**Ասպիրանտուրայում սովորողների թիվն ու սեռային բաշխվածությունը (%), 2010-2022 թթ.<sup>2</sup>**

<sup>1</sup> ՀՀ գիտությունների կազմակերպիչ ակադեմիայի պաշտոնական կայքը՝ <https://www.sci.am/about.php?langid=1>

<sup>2</sup> Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարանների հիման վրա՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, մուտք՝ 26.07.2024 թ.:

թյունը ցույց է տալիս, որ 2010–2022 թվականների ընթացքում ասպիրանտուրայում սովորողների տեսակարար կշիռը նվազել է տարեկան միջինում 4%-ով: Ընդ որում, հատկանշական է, որ 2010 թվականի համեմատ 2022 թվականին ասպիրանտուրայում սովորողների թիվը նվազել է 40.2%-ով՝ կազմելով 737 մարդ: Հետաքրքրական է արձանագրել, որ հատկապես 2013–2021 թվականների ընթացքում ասպիրանտուրայում սովորող կանանց տեսակարար կշիռը կազմել է 52.4%, իսկ տղամարդկանցը՝ 46.6%: Այսինքն՝ առնվազն ասպիրանտուրայում սովորելու նախաձեռնողականությունը կանանց շրջանում տարածում ունի: Բայց և այնպես, սեռային բաշխվածության խնդիրը ոչ այնքան ընդհանուր սովորողների թվի մեջ է, որքան առանձին մասնագիտությունների մասով՝ կանանց ներգրավվածության:

Դիտարկվող 2010–2022 թվականների ընթացքում, ըստ մասնագիտությունների, ասպիրանտուրայում սովորողների թվաքանակի վերլուծությունը ցույց է տալիս, որ բացի «Հոգեբանությունից», մնացած բոլոր մասնագիտությունների ցուցանիշներն անկման միտում են ցուցաբերում: 2022 թվականին ամենամեծ տեսակարար կշիռը տեխնիկական մասնագիտություններով ասպիրանտուրայում սովորողներին էր (ընդհանուրի՝ 18.7%-ը), ապա տնտեսագիտության (ընդհանուրի՝ 18%-ը): Այդուհանդերձ, օրինակ՝ տնտեսագիտության մասնագիտությամբ ասպիրանտուրայում սովորողների թիվը 2010 թվականի համեմատ 2022 թվականին նվազել է 55.1%-ով՝ կազմելով 132 մարդ: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության առավելապես ագրարային բնույթը՝ ցավալի է արձանագրել, որ 2021–2022 թվականների ընթացքում այս մասնագիտությամբ ասպիրանտուրայում սովորողներ առհասարակ չեն եղել: Խորհրդային լուրջ ժառանգություն ունեցող կիրառական գիտությունների առումով,

անկումը նույնքան տեսանելի է: Այսպես՝ քիմիական մասնագիտություններով ասպիրանտուրայում սովորողների թիվը 2010 թվականի համեմատ 2022 թվականին նվազել է 66.7%-ով, ֆիզիկամաթեմատիկական՝ 56.4%-ով, կենսաբանական՝ 40.5%-ով և այլն:

Ասպիրանտների սեռային բաշխվածությունն ըստ մասնագիտությունների նույնպես հետաքրքրական է: Այսպես՝ 2022 թվականին տղամարդիկ ֆիզիկամաթեմատիկական մասնագիտություններով սովորողների 83.3%-ն էին, տեխնիկական մասնագիտություններով սովորողների՝ 81.2%-ը: Մյուս կողմից, կանայք հոգեբանություն ուսումնասիրող ասպիրանտների 95.7%-ն էին, արվեստագիտություն ուսումնասիրողների՝ 83.3%-ը, իսկ մանկավարժություն ուսումնասիրողների՝ 80%-ը:

Բավական մտահոգիչ է նաև ասպիրանտուրայում սովորողների բաշխվածության պատկերն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների: Օրինակ՝ 2022 թվականին ասպիրանտուրայում սովորողների 98.5%-ը բնակվել է Երևանում<sup>3</sup>: Սա ընդգծում է այն խնդիրը, որ Հայաստանում գործող 60 գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների 86.7%-ը նույնպես տեղակայված է Երևանում<sup>4</sup>:

Հայաստանում գիտության զարգացման հնարավորությունների բացահայտման տեսանկյունից, հաջորդ առանցքային ցուցանիշներն են ասպիրանտուրան ավարտած մարդկանց թվի և դրա մեջ թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների տեսակարար կշիռը: Այսպես՝ գծապատկեր 2-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2022 թվականին սովորող ասպիրանտների ընդամենը 31.6%-ը կամ 233 մարդ է ավարտել կրթությունը, իսկ նրանցից միայն 66-ն է պաշտպանել թեկնածուական ատենախոսություն:

Հատկանշական է, որ ասպիրանտու-


<sup>3</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարան՝ [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_\\_2%20Population%20and%20social%20processes\\_\\_22%20Education\\_\\_228%20Postgraduate%20education/ps-ed-pge04.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01e-a885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__22%20Education__228%20Postgraduate%20education/ps-ed-pge04.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01e-a885bb), մուտք՝ 26.07.2024 թ.:

<sup>4</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարան՝ [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_\\_2%20Population%20and%20social%20processes\\_\\_22%20Education\\_\\_228%20Postgraduate%20education/ps-ed-pge02.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01e-a885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__22%20Education__228%20Postgraduate%20education/ps-ed-pge02.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01e-a885bb), մուտք՝ 26.07.2024 թ.:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

**ՀՀ-ում ասպիրանտուրայում սովորողների թիվն ըստ մասնագիտությունների, 2010-2022 թթ.<sup>5</sup>**

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Ֆիզիկամաթեմատիկական	165	137	160	138	152	134	139	115	89	73	88	91	72
Քիմիական	21	8	8	18	16	13	14	9	12	11	7	9	7
Կենսաբանական	79	50	54	57	57	43	47	49	41	46	48	51	47
Երկրաբանական	29	25	21	16	18	24	35	34	32	35	22	22	17
Տեխնիկական	160	182	190	200	165	178	184	149	124	107	127	134	138
Գյուղատնտեսական	17	14	10	20	23	13	2	2	2	4	6	-	-
Պատմական	57	37	39	65	68	70	84	66	75	78	61	50	43
Տնտեսագիտական	294	236	218	271	269	256	276	249	208	194	186	160	132
Փիլիսոփայական	17	22	34	26	24	20	17	16	14	13	10	7	14
Բանասիրական	92	71	69	101	96	86	99	115	114	121	114	83	62
Աշխարհագրական	-	3	1	-	-	-	-	-	-	-	-	-	-
Իրավաբանական	89	78	89	112	107	103	87	81	77	61	73	64	75
Մանկավարժական	29	18	15	19	22	39	29	29	21	22	23	15	15
Բժշկական	38	28	34	40	37	26	21	17	18	26	17	23	18
Դեղագործական	3	4	2	3	1	2	-	2	2	-	1	1	2
Անասնաբուժական	5	2	4	4	4	1	1	-	-	-	1	1	1
Արվեստագիտական	33	24	25	24	24	23	23	23	23	15	19	13	18
Ճարտարապետական	30	16	38	17	17	24	25	24	28	29	13	9	9
Հոգեբանական	19	25	21	37	43	42	36	33	32	36	30	24	23
Սոցիոլոգիական	-	10	11	12	14	13	15	16	17	18	11	9	5
Քաղաքական	47	64	61	61	66	68	68	56	56	47	54	46	39
Լրագրության	8	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>1232</b>	<b>1054</b>	<b>1104</b>	<b>1241</b>	<b>1223</b>	<b>1178</b>	<b>1202</b>	<b>1085</b>	<b>985</b>	<b>936</b>	<b>911</b>	<b>812</b>	<b>737</b>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

**Ասպիրանտուրա ավարտածների թիվն ու թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների տեսակարար կշիռը (%), 2010-2022 թթ.<sup>2</sup>**

<sup>5</sup> Աղյուսակը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարանների հիման վրա՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, մուտք՝ 26.07.2024 թ.:


<sup>6</sup> Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարանների հիման վրա՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, մուտք՝ 26.07.2024 թ.:

րա ավարտածների քանակի ցուցանիշը 2010-2022 թվականների ընթացքում հիմնականում նվազման միտում է ցուցաբերել, իսկ 2010 թվականի համեմատ դա նվազել է 47%-ով: Միաժամանակ, դիտարկվող ժամանակաշրջանում տարեկան միջինում 4%-ով նվազել է ավարտածների մեջ թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների տեսակարար կշիռը: Մասնավորապես՝ 2010 թվականի համեմատ ասպիրանտուրա ավարտածների մեջ թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների թիվը 2022 թվականին նվազել է 2.5 անգամ՝ կազմելով ընդամենը 66 մարդ:

Հետաքրքրական է նաև ասպիրանտուրա ավարտած և թեկնածուական ատենախոսություն պաշտպանած մարդկանց սեռային բաշխվածության ուսումնասիրությունը: Այսպես՝ տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2022 թվականին ասպիրանտուրան ավարտածների 50.6%-ը կին է, 49.4%-ը՝ տղամարդ: Սակայն, արդեն թեկնածուական ատենախոսություն պաշտպանածների առումով, իրավիճակը կտրուկ կերպով փոխվում է: Ասպիրանտուրա ավարտած և թեկնածուական ատենախոսություն պաշտպանած կանանց տեսակարար կշիռը կազմել է ընդ-

հանորի 16.7%-ը, իսկ տղամարդկանցը՝ 83.3%-ը<sup>7</sup>: Ընդ որում, այս ցուցանիշների առումով, իրավիճակը 2010-2022 թվականների ընթացքում գրեթե համանման է: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ, չնայած ասպիրանտուրա ընդունվելու և ավարտելու տեսանկյունից կանանց և տղամարդկանց մասնակցության, ընդհանուր առմամբ, համաչափությանը, արդեն որպես գիտնական դիրքավորման առումով, կանայք դեռևս լուրջ մարտահրավերների են բախվում, ինչը, իհարկե, հանգեցնելու է ապագայում կանանց ներուժի ոչ ամբողջական իրացմանը մեր երկրի զարգացման ապահովման գործում: Ըստ որոշ մասնագիտությունների՝ ատենախոսություն պաշտպանած անձանց թվաքանակի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2022 թվականին 23%-ը մասնավարժության ոլորտում են գիտական աստիճան ստացել, ընդ որում, բոլորը՝ կանայք: Կենսաբանության մասնագիտությամբ ատենախոսություն պաշտպանած անձանց թիվը 2022 թվականին 10 մարդ է, որից 8-ը՝ կին, իսկ տեխնիկական մասնագիտությամբ, համապատասխանաբար՝ 9 և 3<sup>8</sup>:

Դոկտորանտների թվի, նրանց սեռային ու ըստ մասնագիտությունների բաշխվածության առումով, պատկերն իրոք մտա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

**Դոկտորանտության սովորողների, ավարտածների և նրանց մեջ ատենախոսություն պաշտպանածների թիվը Հայաստանում, 2010-2022 թթ.<sup>9</sup>**

<sup>7</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարան՝ [https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank\\_\\_2%20Population%20and%20social%20processes\\_\\_22%20Education\\_\\_228%20Postgraduate%20Education/ps-ed-pge02.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb](https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank__2%20Population%20and%20social%20processes__22%20Education__228%20Postgraduate%20Education/ps-ed-pge02.px/table/tableViewLayout2/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb), մուտք՝ 26.07.2024 թ.:

<sup>8</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեի, «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2022 թվականին» [https://armstat.am/file/article/soc\\_sit\\_2022\\_7.pdf](https://armstat.am/file/article/soc_sit_2022_7.pdf), մուտք՝ 26.07.2024 թ.:

<sup>9</sup> Գծապատկերը կազմվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարանների հիման վրա՝ <https://statbank.armstat.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=9ba7b0d1-2ff8-40fa-a309-fae01ea885bb>, մուտք՝ 26.07.2024 թ.:

հոգիչ է: Այսպես՝ 2010 թվականի 57 դոկտորանտի փոխարեն՝ 2022 թվականին դոկտորական ատենախոսություն է պաշտպանել 17-ը: Ընդ որում, թեև 2022 թվականին դոկտորանտության ավարտել է ընդունվածների 64.7%-ը, սակայն նրանցից ոչ մեկը դոկտորական ատենախոսություն չի պաշտպանել:

«Գիտության՝ առնվազն նախորդ տարիների համայնապատկերի ուսումնասիրությունը հիմք է տալիս ենթադրելու, որ գիտության ոլորտը մեր երկրում խոր ճգնաժամի մեջ է, ինչի հետևանքները, իհարկե, ապագայում առավել տեսանելի ու շոշափելի են դառնալու: Սա հստակ արտացոլվում է նաև Հայաստանի ՀՆԱ-ում, որտեղ 2022 թվականին գիտատեխնիկական աշխատանքների ծավալը կազմել է ընդամենը 0.2%, իսկ հետազոտությունների և մշակումների համախառն ծախսերը՝ 0.21%<sup>10</sup>: Ընդհանուր առմամբ, Հայաստանում հետբուհական կրթության և գիտության զարգացումը խոչընդոտող առանցքային խնդիրը շարունակում է մնալ թերֆինանսավորումը, ինչը հանգեցնում է ոլորտից երիտասարդ մասնագետների արտահոսքին ու գիտության «ծերացմանը»: Այս պահին երիտասարդ գիտնականների հոսքը դեպի գիտություն թույլ է, ինչը լրջագույն խնդիր է, որն ունի օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներ:

Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ հետազոտությունների և մշակումների ուղղությամբ հիմնական ներդրումները մասնավոր հատվածից են: Այս մոտեցման կիրառումը կարող է գիտությամբ զբաղվելը մրցունակ դարձնելու հեռանկարներ ստեղծել նաև Հայաստանում: Սակայն, մասնավոր հատվածից շատ մեծ ծավալի ներդրումներ ակնկալելն այս պահին իրատեսական չէ: Խնդիրն այն է, որ գիտական համայնքի և մասնավոր հատվածի միջև համագործակցության հնարավորությունները թույլ են: Համագործակցության հարթակ ստեղծելու կարևոր առաքելությունը և գիտության պաշտպանության գործառույթը պետք է լինեն պետական հոգաձության ներքո, հակառակ դեպքում «ուղեղների արտահոսքը» շարունակվելու է: Պետության խնդիրը, առաջին հեր-

թին, գիտության ենթակառուցվածքները կայացնելն է, որի շնորհիվ՝ գիտական համայնքը կարող է ծանոթանալ աշխարհի ամենավերջին և ամենանոր գիտելիքի հետ: Չէ որ եթե գիտնականը պետք է ստեղծի նոր գիտելիք, ապա նա պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու աշխարհում ստեղծված վերջին գիտելիքի հետ:

Մյուս կողմից, թվային կամ 4-րդ արդյունաբերական հեղափոխությունը, թվում է, վայրկյանի արագությամբ անդրադառնում է առօրյա կյանքի գրեթե բոլոր ոլորտների վրա՝ փոխելով մինչև իսկ մեր աշխատելու մշակույթն ու արժեհամակարգը: Սա, իհարկե, չի կարող ուղղակիորեն չկերպարանափոխել հետբուհական կրթությունն ու դրա մրցունակ լինելու նախապայմանները: Եթե հարյուր տարի առաջ համալսարանները գիտելիքի «ամբարներն» էին, որտեղ սովորելով՝ հնարավոր էր հասանելիություն ստանալ վերջին գրքերին, ակադեմիական հոդվածներին կամ հետազոտություններին, ապա մեր օրերում այլ իրականություն է: Համացանցն իր որոնողական համակարգերով մեզնից յուրաքանչյուրին հնարավորություն է տալիս ծանոթանալու ոլորտի լավագույն գիտնականների աշխատանքներին և դասախոսություններին: Այս պարագայում հարց է առաջանում՝ ինչպե՞ս դիմակայել համաշխարհային մրցակցությանը: Մրցունակ կրթության բանալին նոր որակի և տեսակի կրթողներն ու գիտնականներն են, որոնք ունեն վերլուծելու կարողություն և այդ կարողությունը փոխանցելու հմտություն, որոնք արժեքների և համոզմունքների փնտրման ճանապարհին գտնվող մարդկանց համար ուղենիշ են՝ կողմնորոշելով նրանց դեպի գիտելիքն ու օգնելով ճիշտ գտել տեղեկատվական անսահման հոսքերը: Մրցունակ կրթական համակարգ ունենալը համառ ջանք ու հետևողական, բարեխիղճ, պրոֆեսիոնալ ամենօրյա աշխատանք է պահանջում ինստիտուտը կայացնողներից:

Հայաստանում անգն աչքով տեսանելի են գիտության ոլորտում առկա բազմաթիվ խնդիրներ, որոնք տարիների ընթացքում, կարծես, ավելանում են: Բայց և այն-

<sup>10</sup> «Ը վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023, <https://www.armstat.am/file/doc/99541068.pdf>, մուտք՝ 26.07.2024 թ.:

պես, մեր երկրի զարգացման ապահովման գործում ինչպես հետբուհական կրթության, այնպես էլ գիտության դերն ու նշանակությունը թերագնահատել չի կարելի: Հայաստանն ունի համապատասխան մարդկային կարողություններ ու ներուժ գիտելիքահենք տնտեսություն և հասարակություն կառուցելու համար, հետևաբար՝ «հրաշքի» հույսին մնալ պետք չէ, հատկապես՝ մեր երկրի առջև ծառայած գոյապահպանական մարտահրավերների պարագայում: Դրա փոխարեն՝ անհրաժեշտ է գիտության առաջնահերթության և դրա զարգացման հստակ օրակարգ: Ի վերջո, ժամանակակից աշխարհը նոր հնարավորությունների և մարտահրավերների առաջ

է կանգնեցրել Հայաստանի հետբուհական էկոհամակարգը, որտեղ փոփոխությունների անհրաժեշտությունն օրակարգային է: Փոփոխություններ, որոնք միտված են արդիականացնելու հետբուհական կրթությունը, ավելի մրցունակ ու առաջադեմ դարձնելու գիտական գործունեությունը և, որ ամենակարևորն է, մոտիվացնելու երիտասարդներին արժեքավորել ու կարևորել ակադեմիական կրթությունը, հասկանալ դրա դերն ու նշանակությունն ինչպես յուրաքանչյուրիս անձնային աճի, այնպես էլ ընդհանուր հասարակության բարեկեցության մակարդակի բարձրացման համար:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պաշտոնական կայք, <https://www.sci.am/about.php?langid=1>
2. ՀՀ վիճակագրական կոմիտեի տեղեկատվական շտեմարաններ, <https://statbank.armstat.am>
3. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2022 թվականին, [https://armstat.am/file/article/soc\\_sit\\_2022\\_7.pdf](https://armstat.am/file/article/soc_sit_2022_7.pdf)
4. ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2023, <https://www.armstat.am/file/doc/99541068.pdf>

**Татевик ВАРДАНЯН**

*Преподаватель кафедры международных экономических отношений, кандидат экономических наук, АГЭУ*

ОБРАЗОВАНИЕ, ИННОВАЦИИ, ЗНАНИЯ

### РАЗМЫШЛЕНИЯ О ТЕКУЩЕМ СОСТОЯНИИ ПОСТВУЗОВСКОГО ОБРАЗОВАНИЯ В АРМЕНИИ И ЕГО ВЛИЯНИИ НА БУДУЩЕЕ СТРАНЫ: ОПАСЕНИЯ И МЫСЛИ

Область науки уже долгое время является значительной проблемой для Армении, однако она остается ключевой для стимулирования экономического и общественного развития. Поэтому целенаправленные усилия по улучшению этой сферы необходимы и должны оставаться приоритетом, независимо от их масштаба или охвата. В этом контексте анализ текущего состояния постдипломного образования в Армении имеет важное значение. Этот анализ позволит выявить основные проблемы и угрозы, препятствующие устойчивому социально-экономическому развитию, и поможет определить, каким будет будущее нашего общества и страны.

**Ключевые слова:** *поствузовское образование, наука, аспирантура, докторские исследования.*

**Tatevik VARDANYAN**

*Lecturer of the Chair of International Economic Relations, PhD in economics, ASUE*

EDUCATION, INNOVATION, KNOWLEDGE

### REFLECTING ON THE CURRENT STATE OF ARMENIA'S POST-GRADUATE EDUCATION AND ITS IMPACT ON THE COUNTRY'S FUTURE: CONCERNS AND THOUGHTS

The field of science has long been a significant challenge for Armenia, yet it remains crucial for driving economic and societal development. Therefore, focused efforts to enhance this sector are essential and must remain a priority, regardless of their scale or scope. In this context, analyzing the current state of the post-graduate education in Armenia is vital. This analysis will identify the main challenges and threats impeding sustainable socio-economic development and help determine the future quality of our society and country.

**Keywords:** *post-graduate education, science, post-graduate studies, doctoral studies*